# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի (այսուհետ՝ Օրենք) ~~6-րդ հոդվածի.~~

~~1) 1-ին հինգ պարբերությունները վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«1. Հուշարձանների դասակարգումն իրականացնում է հուշարձանների պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:~~

~~2. Հուշարձաններն ըստ արժևորման չափանիշների դասակարգվում են համամարդկային, հանրապետական և տեղական նշանակության:~~

~~ա) Համամարդկային նշանակության կարգին են դասվում հայ ժողովրդի պատմության և մշակույթի այն բարձրարժեք հուշարձանները, որոնք իրենց բացառիկությամբ համընդկրկուն քաղաքակրթական արժեք ունեն և ընդգրկված են կամ սահմանված կարգով կարող են ընդգրկվել համաշխարհային ժառանգության ցանկում:~~

~~բ) Հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի բարձրարժեք, հնագույն, տիպական հուշարձանները:~~

~~գ) Տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, նրա առանձնահատկությունները~~

~~բնութագրող, գեղարվեստական, ինքնատիպ, պատմական կամ հնագիտական նշանակության ունեցող հուշարձանները:»։~~

~~2) 6-րդ պարբերությունում «Հուշարձանները» բառից առաջ ավելացնել «3.» թիվը։~~

***~~Հոդված 2.~~*** ~~Օրենքի~~ 7-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 7. **Հուշարձանների պահպանության և օգտագործման արգելումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական, ազգային խտրականության և ռազմական նպատակներով**

1. Արգելվում է հուշարձանների պահպանությունը և օգտագործումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականության նպատակներով:

2. Արգելվում է զինված ընդհարման կամ պատերազմական գործողությունների ժամանակ հուշարձանների, դրանց անմիջական շրջակայքի և պահպանության գոտու օգտագործումն ու վերափոխումն այնպիսի նպատակներով, որոնք կարող են հանգեցնել հուշարձանի ավերմանը կամ վնասվելուն:»

***Հոդված ~~3~~ 2.*** Օրենքի 8-րդ հոդվածում~~ում~~ի.

դ) կետում «վերականգնման» բառից հետո լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը:

***Հոդված 4. 3*** Օրենքի 9-րդ հոդվածում~~ում~~ի.

1) 1-ին մասի բ) կետում «վերականգնման» բառից հետո լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը:

2) 1-ին մասը լրացնել նոր՝ է3), է4) և է5) կետերով հետևյալ բովանդակությամբ.

«է3) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման,

փոփոխման և տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերի կազմման և հնագիտական պեղումների իրականացման վերաբերյալ կողմնորոշիչ գները.

էՀ4) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին, միջնադարյան և նոր ժամանակաշրջանների պատմության և մշակույթի հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման, ինչպես նաև հատուկ պահպանվող Պատմական և մշակութային հողերում շինարարության իրականացման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքի ձևը.

էՀ5) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին, միջնադարյան և նոր ժամանակաշրջանների պատմության և մշակույթի հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման, ինչպես նաև հատուկ պահպանվող Պատմական և մշակութային հողերում շինարարության թույլտվության ձևը.»

3) 1-ին մասը լրացնել նոր «Ժ1) կետով հետևյալ բովանդակությամբ.

«Ժ1) սահմանված կարգով տրամադրում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին և միջնադարյան ժամանակաշրջանների պատմության և մշակույթի հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման, ինչպես նաև հատուկ

պահպանվող Պատմական և մշակութային հողերում քաղաքաշինական գործունեության իրականացման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքներն ու շինարարության թույլտվությունները.»

~~2~~ 4) ժգ) կետում «վերականգնման,» բառից հետո լրացնել «տեղափոխման, փոփոխման,» բառերը:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանրապետական և տեղական նշանակության հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքում: Բացառություն են կազմում մոնումենտալ արվեստի հուշարձանները և/կամ ճարտարապետական փոքր ձևերը, որոնց տեղափոխումը հրամայական է և բխում է հուշարձանի նյութական պահպանության լավագույն շահից: Բոլոր դեպքերում լիազոր մարմինը անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի պատշաճ վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման համար: Հանրապետական և տեղական նշանակության հուշարձանի տեղափոխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ՝ լիազորված մարմնի դրական եզրակացության հիման վրա»:

***Հոդված 5.*** Օրենքի 41-րդ հոդվածի.

1) վերնագրում և ամբողջ հոդվածում «զբոսաշրջիկություն» բառը փոխարինել «զբոսաշրջություն» բառ~~ով~~ի համապատասխան հոլովաձևով:

2) 2-րդ պարբերությունը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հուշարձանները զբոսաշրջության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունները կամ անձինք համապատասխան պայմանագրեր են կնքում սեփականատերերի հետ»:

Հոդված 6. Օրենքի 44-րդ հոդվածում «վերականգնման» բառից հետո լրացնել «,տեղափոխման, փոփոխման» բառերը:

***Հոդված ~~6~~ 7.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: